

Խնդրում եմ տեղեկացնել հանձնաժողովի անդամներին, աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներին, ինչպես նաև նախապատրաստել հակիրճ զեկույց՝ գործակարգավար. խորհրդակցությանը ներկայացնելու համար

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի գլխավոր քարտուղար պարոն Ա. Սաֆարյանին

Տիկին Ն. Գաբրիելյանին՝ Ի գիտություն

Ա. Սաֆարյան

*(Signature)*

«05» 12 2023թ.

**ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

**1. Քաղաքացիական ծառայողի անունը, ազգանունը՝**

- Սևակ Բարսյան,
- Դավիթ Մուրադյան:

**2. Զբաղեցրած պաշտոնը՝ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի՝**

- ֆինանսատեխնիկական և դիմումների քննարկման վարչության ֆինանսական վերլուծության բաժնի պետ,
- սակագնային քաղաքականության վարչության զարգացման ծրագրերի բաժնի պետ:

**3. Գործուղման վայրը և ժամկետները՝ Վիեննա, Ավստրիա, 2023 թվականի նոյեմբերի 29-30-ին:**

**4. Հրավիրող կողմը (առկայության դեպքում)՝** Էներգետիկայի կարգավորողների եվրոպական խորհուրդ (CEER):

**5. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝** Մասնակցել «ԱԼԳ երկրների ինքնասպառման կարգավորման համապատասխանեցումը Եվրոպական միության և Էներգետիկ համայնքի պահանջներին» թեմայով 2-օրյա աշխատանքային սեմինարին:

**6. Քննարկված թեմաները (հարցերը)՝** Էներգետիկ համայնքի (Energy Community) քարտուղարության ծրագրերի կառավարման բաժնի ղեկավարի բացման խոսքից հետո Էներգետիկ համայնքի (Energy

Community) քարտուղարության փորձագետները ներկայացրեցին սպառողների կողմից սեփական կարիքների համար էլեկտրական էներգիայի արտադրության գործընթացի մասով էներգետիկ համայնքի ընդհանուր մոտեցումները՝ մասնավորապես, ինքնավար էներգաարտադրության կազմակերպման, էլեկտրական էներգիայի փոխհոսքերի հաշվարկի եղանակների, նշված գործընթացի շրջանակում իրավական կարգավորումների, հատուցման ենթակա էլեկտրական էներգիայի միավորի գնի մասին և այլն, ինչպես նաև նշված ուղղության հետագա զարգացման և կատարելագործման մասով էներգետիկ համայնքի որդեգրած քաղաքականությունը: Մասնավորապես նշվեց, որ էներգետիկ համայնքը առավելապես նպատակային թիրախ է համարում սպառողների կողմից վերականգնվող էներգառեսուրսների օգտագործմամբ էլեկտրական էներգիայի արտադրության խթանումը, որը, կիրառվող տարածաշրջանում բնապահպանական խնդիրներ լուծելուց բացի, նպաստում է նաև էներգետիկ անկախության և ինքնաբավության մակարդակի բարձրացմանը:

Այնուհետև, ԱԳ երկրների ինքնասպառման համակարգերի առկա իրավիճակի և կիրառվող մոտեցումների մասին զեկույցներով հանդես եկան Հայաստանի, Վրաստանի, Մոլդովայի, Ուկրաինայի և Ադրբեջանի պատվիրակությունների ներկայացուցիչները:

Հայաստանի պատվիրակության կողմից ներկայացվեց Հայաստանում ինքնավար էներգաարտադրության գործող մոդելի առանձնահատկությունները, հիմնական սկզբունքները և հաշվարկի մեխանիզմները: Մասնավորապես, ներկայացվեց՝

- Հայաստանում ինքնավար էներգաարտադրության գործընթացի մեկնարկը և զարգացման պատմությունը,
- ինքնավար էներգաարտադրության գործընթացը կարգավորող օրենսդրությունը,
- ինքնավար էներգաարտադրության գործընթացի Հայաստանյան մոդելի բովանդակությունը,
- ինքնավար էներգաարտադրողի կայանի թույլատրելի առավելագույն հզորությունների սահմանաչափերը,
- ինքնավար էներգաարտադրության հիմնական առավելությունները էլեկտրական էներգիայի լիցենզավորված արտադրության նկատմամբ (լիցենզավորման ընթացակարգերից ազատում, կուտակված էլեկտրաէներգիայի սպառման հնարավորություն հաջորդող հաշվարկային ամիսներին, հաշվարկային տարվա ավարտին կուտակված էլեկտրական էներգիայի դիմաց դրամային հատուցման տրամադրում, հարկային արտոնություններ և այլն),

- ինքնավար էներգաարտադրության գործընթացի շրջանակում Հայաստանում կիրառվող շարունակական բարեփոխումները (ինքնավար խմբերի ստեղծման, նույն ինքնավար էներգաարտադրողի կողմից իր միացման տարբեր կետերում էլեկտրական էներգիայի արտադրություն և սպառման հնարավորություններ և այլն),
- ինքնավար խմբում արտադրված և սպառված էլեկտրական էներգիայի հաշվառման՝ ընդհանուր և ընտրովի մեթոդների առանձնահատկությունները,
- նույն ինքնավար էներգաարտադրողի կողմից իր տարբեր միացման կետերում էլեկտրական էներգիայի արտադրության և սպառման ցուցանիշների հաշվառման առանձնահատկությունները:

Քննարկումների արդյունքում, էներգետիկ համայնքի քարտուղարության փորձագետների, ինչպես նաև ԱԷԳ մասնակից երկրների զեկույցների բովանդակային համադրության արդյունքում ի հայտ եկան այն հիմնական նմանություններն ու տարբերությունները, որոնք առկա են էլեկտրական էներգիայի ինքնասպառման համակարգերի գործընթացի շրջանակում՝ Հայաստանում ներդրված մոդելի համեմատությամբ:

- Հատկանշական է, որ որոշ երկրներում ինքնասպառման համակարգերի մեթոդաբանական մշակման աշխատանքները դեռևս մեկնարկային փուլում են, որից հետո նոր միայն այդ ուղղությամբ կիրականացվեն գործնական քայլեր:
- Որոշ երկրներում ինքնասպառման համակարգերի բովանդակային մեթոդաբանությունը նման է Հայաստանում ներդրված մոդելին, որի համաձայն՝ ինքնավար էներգաարտադրողի (prosumer) կողմից հաշվարկային ժամանակահատվածում արտադրված և չսպառած էլեկտրական էներգիայի քանակությունը, վերջինիս կողմից հետագա սպառման նպատակով, տեղափոխվում է հաջորդող ամիսներ՝ էլեկտրական էներգիայի քանակական (ոչ դրամային) արտահայտությամբ (արտահայտված կՎտժ-ով): **Միջազգային մասնագիտական մեթոդաբանությամբ՝ գործընթացի այս մոդելը հայտնի է Net Metering տերմինաբանական ձևակերպմամբ:**
- Իսկ մի շարք երկրներում էլ այս գործընթացն իրականացվում է որոշակի մեթոդական և բովանդակային տարբերություններով: Մասնավորապես, ինքնավար էներգաարտադրողի կողմից արտադրված և չսպառած էլեկտրական էներգիայի քանակությունը տեղափոխվում է հաջորդող ամիսներ՝ էլեկտրական էներգիայի դրամային (ոչ քանակական) արտահայտությամբ (արտահայտված տվյալ երկրի

արժույթով, իսկ ԵՄ անդամ երկրների պարագայում՝ արտահայտված Եվրոյով): Այս պարագայում, էլեկտրական էներգիայի բացասական փոխհոսքի դեպքում ինքնավար էներգաարտադրողի համար առաջարկվում են նաև տարածամկետ վճարման պայմաններ: **Միջազգային մասնագիտական մեթոդաբանությամբ՝ գործընթացի այս մոդելը հայտնի է Net Billing տերմինաբանական ձևակերպմամբ:**

➤ Կարևոր է արձանագրել նաև, որ տարբեր երկրներում կիրառվող՝ թե **Net Metering-ի** (Հայաստանում ևս գործնականում կիրառվում է այս մոդելը), և թե **Net Billing-ի** մոդելների շրջանակում կիրառվում են տարբեր միջանկյալ և ամբողջական ժամանակահատվածներ; Օրինակ, Հայաստանում **Net Metering-ի** մոդելի շրջանակում միջանկյալ հաշվետու ժամանակահատվածն ամիսն է, իսկ ամբողջական հաշվարկային ժամանակահատվածը՝ յուրաքանչյուր օրացուցային տարվա մայիսի 1-ից մինչև հաջորդող օրացուցային տարվա ապրիլի 30-ը ներառյալ ժամանակահատվածը, որն «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի 56.2-րդ հոդվածի 2-րդ մասով կիրառված տերմինաբանությամբ կոչվում է ինքնավար էներգաարտադրության շրջանակում հաշվարկային տարի: Այլ երկրներում, որպես հաշվարկային միջանկյալ կամ ամբողջական ժամանակահատվածներ, կիրառվում են նաև ժամ, օր կամ ամիս ժամանակահատվածները՝ կախված տվյալ երկրում ներդրված մոդելի բովանդակային կամ եղանակային-բնակլիմայական առանձնահատկություններից:

**7. Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝** Քննարկումների արդյունքում ձեռք բերվեց պայմանավորվածություն՝ աշխատանքային կարգով փոխգործակցել և գործընկեր երկրների հետ քննարկել ինքնասպառման համակարգերի հետագա զարգացման նոր տեսլականները և առաջարկվող նոր գործիքակազմերը:

**8.Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝** Ներկայումս շրջանառության մեջ են դրված «Էներգետիկայի մասին» և «Էներգաարդյունավետության և վերականգնվող էներգետիկայի մասին» ՀՀ օրենքների նախագծերը, որոնցով նախատեսվում է ինքնավար էներգաարտադրությանն առնչվող կարգավորումները «Էներգետիկայի մասին» օրենքից ամբողջությամբ տեղափոխել նոր ընդունվող «Էներգաարդյունավետության և վերականգնվող էներգետիկայի մասին» օրենքի տիրույթ: Նշված օրենսդրական նախաձեռնությունների արդյունքում նախատեսված է

կիրառության մեջ դնել հնքնավար էներգաարտադրությանն առնչվող նորովի մոտեցումներ, որոնց քննարկման շրջանակում, կարող են դիտարկվել նաև էներգետիկ համայնքի քարտուղարության փորձագետների, ինչպես նաև ԱԳ մասնակից երկրների կողմից ներկայացված՝ **Net Billing-ի** մոդելի ներդրման հնարավորությունը Հայաստանում և, դրան առնչվող օրենսդրական հիմքերի ամրագրումը «էներգաարդյունավետության և վերականգնվող էներգետիկայի մասին» օրենքի նախագծում:

Գործուղվող



05.12.2023թ

Ս. Բաբայան

(ստորագրությունը, ամսաթիվը)

Գործուղվող



05.12.2023

Դ. Մուրադյան

(ստորագրությունը, ամսաթիվը)

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐՋՆԱՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով

2. Գործուղման մասին իրավական ակտի համարը Հրաման 1075-ԳՔ, 14.11.2023թ.

3. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը (մասնագիտությունը)

Ֆինանսատեխնիկական և դիմումների քննարկման վարչության ֆինանսական վերլուծության բաժնի պետ  
Սևակ Բաբայան,

Սակագնային քաղաքականության վարչության զարգացման ծրագրերի բաժնի պետ  
Դավիթ Մուրադյանի:

(թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում)

4. Գործուղման վայրը Վիեննա / Ավստրիա /

5. Գործուղման ժամկետները 28.11.2023-01.12.2023թթ.

6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝ ՀՀ պետական բյուջե

1) իրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը

(թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն)

Ճանապարհածախս, գիշերավարձ

2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը՝ Օրապահիկ

(ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան)

(ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը)

ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը

բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը		Սևակ Բարայան	Դավիթ Մուրադյանի	Ընդամենը (հազ. դրամ)
Ճանապարհածախս	Ավիաճառախառնի տեսակը (էկոնոմ դաս, բիզնես դաս)			
	Ավիատոմսի արժեքը (դրամ)			
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով՝ եվրո)			
	Վճարը 1 օրվա համար (դրամ)			
	Օրերի քանակը			
	Ընդամենը (դրամ)			
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով՝ եվրո)	141	141	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	61,686.09	61,686.09	
	Օրերի քանակը	4	4	
	Ընդամենը (դրամ)	246,744	246,744	493.49
Այլ ծախսեր	Հակահամաճարակային նմուշառումների վճար			
	Մուտքի արտոսագրի վճար			
	Այլ ծախսեր (նկարագրել)			
<b>Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)</b>		<b>246.74</b>	<b>246.74</b>	<b>493.49</b>

Գլխավոր ֆինանսիստի ստորագրությունը,

(հավելվածը լրաց. 23.03.23 N 326-Ն)

Ամսաթիվ



04.12.2023թ.

